ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ք.Սիսիան Գ. Նժդեհի 6

Հեռ. 2-32-20

Թիվ ԴԴ 31-2239

04.10.2013թ.

ՀՀ Սյունիքի մարզպետարանին
ք. Կապան Նժդեհի 1

Կից ուղարկվում է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 04.10.2013 թվականի թիվ ՍԴ1/0122/02/13 քաղաքացիական գործով վճռի օրինակը:

Առդիր վճիռը 3 թերթ :

Դատավորի օգնական Հ. Հովհաննիսյան

7 10 6665 2013թ

ՍԴ1/0122/02/13

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

04.10.2013թ. ք. Սիսիան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը

նախագահությամբ՝ դատավոր Իգնատ Բեգլարյան
քարտուղարությամբ՝ Կարինե Նիկոլյան
մասնակցությամբ հայցվորի ներկայացուցիչ Հայկ Կարապետյան

Դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Սյունիքի մարզի դատախազության (գրանցման վկայական 002347, ՀՎՀՀ 02506634, հասցեն քաղաք Կապան Մ.Ստեփանյան 2) ընդդեմ Վարդան Վոլոդյայի Հայրապետյանի հայցվորի կողմում հանդես եկող երրորդ անձ ՀՀ Սյունիքի մարզպետարանի գումարի բռնագանձման պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Տ

I

Գործի դատավարական նախապատմությունը

10.09.2011 և 15.09.2011 թվականին ՀՀ Սյունիքի մարզպետի և Վարդան Վոլոդյայի Հայրապետյանի միջև կնքվել է փոխառության պայմանագիր համաձայն որի փոխատուն փոխառուին է հանձնել հաստատված տեխնիկական բնութագրով նախատեսված որակի աշնանացան ցորենի առաջին վերարտադրության 2200 կգ սերմ, իսկ փոխառուն պարտավորվել է մինչև 01.12.2012 թվականը հետ վերադարձնել 352000 ՀՀ դրամ:

25.07.2013 թվականին Սյունիքի մարզի դատախազությունը հայց է ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Վարդան Վոլոդյայի Հայրապետյանի հայցվորի կողմում հանդես եկող երրորդ անձ ՀՀ Սյունիքի մարզպետարանի գումարի բռնագանձման պահանջի մասին:

25.07.2013 թվականին հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Ներկայացվել է միջնորդություն հայցի ապահովման միջոց կիրառելու մասին:

25.07.2013 թվականին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը:

Հայցադիմումին պատասխան և առարկություն պատասխանողի կողմից չի ներկայացվել:

Հայցվորի ներկայացուցչի դիրքորոշումը

Հայցվոր Սյունիքի մարզի դատախազության ներկայացուցիչ Հայկ Կարապետյանը պնդեց պահանջը և նշեց, որ «Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու և սերմերի ներմուծումը թույլատրելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 29.07.2010 թվականի թիվ 971-Ն որոշման շրջանակներում, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 31.03.2011 թվականի «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի աշնանացան ցորենի սերմարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու և սերմերի ներմուծումը թույլատրելու մասին» N 330-Ն և 17.02.2011 թվականի «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի աշնանացան ցորենի սերմարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու և սերմերի ներմուծումը թույլատրելու մասին» N 279-Ն որոշումների 10.09.2011 թվականին և 15.09.2011 թվականին ՀՀ Սյունիքի մարզպետի և Սիսիան քաղաքի Շահումյան 74/4 հասցեի բնակիչ Վարդան Վոլոդյայի Հայրապետյանի միջև կնքվել է փոխառության պայմանագրեր, համաձայն որոնց փոխատուն փոխառուին է հանձնել պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագրով նախատեսված որակի աշնանացան ցորենի առաջին վերարտադրության 2200 կգ սերմ, իսկ փոխառուն պարտավորվել է մինչև 01.12.2012

թվականը հետ վերադարձնել 352000 ՀՀ դրամ՝ համաձայն N 2 հավելվածի: 12.04.2013 թվականին Սյունիքի մարզպետը թիվ 01/2899-13 գրությամբ դիմել է Սյունիքի մարզի դատախազություն և խնդրել է, որ դատախազությունն իր լիազորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկի փոխառության պայմանագրով գյուղացիական տնտեսություններին բաշխված սերմացուի դիմաց չվճարված գումարների գանձումն ապահովելու համար: Պատասխանող Վարդան Վոլոդյայի Հայրապետյանը հայցադիմումը ներկայացնելուց հետո պարտք գումարից վճարել է 160000 ՀՀ դրամ և նշված հանգամանքները հաշվի առնելով խնդրում է Վարդան Վոլոդյայի Հայրապետյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 192000 ՀՀ դրամ պարտք գումարը:

<u>Պատասխանողի դիրքորոշումը</u>

Պատասխանող Վարդան Վոլոդյայի Հայրապետյանը դատական նիստին չի ներկայացել:

<u>Հայցվորի կողմում հանդես եկող երրորդ անձի դիրքորոշումը</u>

Հայցվորի կողմում հանդես եկող երրորդ անձ ՀՀ Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչը դատական նիստին չի ներկայացել:

II

<u>Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

Հետազոտելով ներկայացված փաստաթղթերը, դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Վարդան Վոլոդյայի Հայրապետյանը ստացել է 2200 կգ աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմ՝ 352000 ՀՀ դրամ արժեքով, որը պետք է վերադարձներ 01.12.2012 թվականին:

2) Վարդան Վոլոդյայի Հայրապետյանը խախտել է փոխառության պայմանագրերով ստանձնած պարտավորությունները և նրա պարտքը կազմել է 352000 ՀՀ դրամ:

3) Վարդան Վոլոդյայի Հայրապետյանը վճարել է 160000 ՀՀ դրամ:

III

<u>Դատարանի իրավական վերլուծությունները</u>

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը: Այն դեպքում, երբ վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, փոխառության գումարը փոխառուն պետք է վերադարձնի այդ մասին փոխատուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսնօրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ, պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բավանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ դատախազության մասին օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

ՀՀ դատախազության մասին օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն դատախազը պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում նաև, եթե դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ դիմել է իրավասու պետական մարմինը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Ուսումնասիրելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը ու վերլուծելով գործով ներկայացված ապացույցները դատարանը գտնում է, որ գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը հաստատված են հետևյալ ապացույցներով՝

Դատարանը Վարդան Վոլոդյայի Հայրապետյանի կողմից 2200 կգ աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմ 352000 ՀՀ դրամ արժեքով ստանալու և գումարը 01.12.2012 թվականին վերադարձնելու փաստերը հաստատված է համարում 10.09.2011 և 15.09.2011 թվականներին ՀՀ Սյունիքի մարզպետի և Վարդան Վոլոդյայի Հայրապետյանի միջև կնքված փոխառության պայմանագրերով:

Վարդան Վոլոդյայի Հայրապետյանի կողմից փոխառության պայմանագրերով ստանձնած պարտավորությունները խախտելու և նրա պարտքը 352000 ՀՀ դրամ կազմելու փաստերը հաստատված է համարում ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի 31.05.2013 թվականին տրված տեղեկանքով:

Վարդան Վոլոդյայի Հայրապետյանի կողմից 160000 ՀՀ դրամ վճարելու փաստը հաստատված է համարում 09.08.2013 թվականի թիվ 1308090118151015 վճարման հանձնարարագրով:

Վերլուծելով և գնահատելով հետազոտված վերը նշված ապացույցները և յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունների վրա հիմնված, դատարանը հանգում է այն հետևության, որ Սյունիքի մարզի դատախազության հայցապահանջը հիմնավորված է ու ենթակա է բավարարման մասնակիորեն՝ 192000 ՀՀ դրամի չափով՝ Վարդան Վոլոդյայի Հայրապետյանից հօգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձել 192000 ՀՀ դրամ պարտք գումարը:

Պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված այն սահմանված չափով վճարված լինելու կապակցությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Տ

Հայցը բավարարել մասնակիորեն:

Վարդան Վոլոդյայի Հայրապետյանից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 192000 ՀՀ դրամ:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին՝ մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր Հ. Բեգլարյան